



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10**

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 /յոթ/ անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գաբրիելյանը, Կարեն Մանասերյանը, Գեղամ Մարգարյանը, Գեղամ Վարդանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**  
Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:**

**Նիստը արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 10 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 10 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
4. Գլաձոր համայնքի գույքային հաշվեկշռում լրացում կատարելու մասին:
5. Գլաձոր համայնքի հաշվեկշռում առկա գարու սերմացուն օտարելու համար թույլտվություն տալու մասին:
6. Տարեցների օրվա կապակցությամբ գումար տրամադրելու մասին:

|        |       |           |
|--------|-------|-----------|
| Կողմ-7 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|--------|-------|-----------|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ջեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ավելացնել եկամտային մասին՝

Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ սուբվենցիա հոդվածին 59150.0 /հիսունինը միլիոն հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա 150.0 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Հողի օտարումից մուտքեր 4000.0 /չորս միլիոն/ ՀՀ դրամ:

2. Պակասեցնել գործառնական դասակարգման՝

09.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4637 /դրամաշնորհներ/ հոդվածից 5710.0 /հինգ միլիոն յոթ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

3. Ավելացնել գործառնական դասակարգման՝

11.01.02 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին 2210.0 /երկու միլիոն երկու հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ և 32210.0 /երեսուներկու միլիոն երկու հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ /պահուստային